ցայժմ...»։ Հիշատակարանից իմացվում է նաև, որ գրքի տպագրության ժամանակ Ամստերդամում քաղաքագլուխ էր Վիլհելմոսը։

2. ՏՕՆԱՑՈՅՑ։ Ամստերդամ (՞), տպ. Ոսկան Երևանցու, 1669, 272 էջ, պատկերներով և զարդերով։ Մատենադարան, № 63։

Անվանաթերթը 5-րդ էջում է, նման է նախորդին, տարբեր է տողատումը, ունի վերջազարդ։ 1-ին էջում կա վերնագիր՝ Ատուրք ցուցանելոյ սրբուհոյ Աստուածածնին։ Հիշատակարան չունի։ Տպագրությունը նախորդից տարբերվում է տառատեսակներով, զարդերով, պատկերներով, էջակալությամբ։



Նկ. 1. 1669 թ. ոսկանյան առաջին տոնացույցի անվանաթերթը (Մատենադարան, № 60)



Նկ. 2. 1669 թ. ոսկանյան մյուս տոնացույցի անվանաթերթը (Մատենադարան, № 63)

1669-ը Ոսկան Երևանցու ամստերդամյան գործունեության վերջին տարին է համարվում։ Ըստ ընդունված կարծիքի, այդ տարի նա տպագրել է երկու գիրք՝ Առաքել Դավրիժեցու «Պատմությունը» և մի շարակնոց[5]. ասենք, որ այդ շարակնոցի տպագրությունը Ոսկանը անավարտ է թողնում[6]։ Այժմ այդ գրքերի վրա պետք է ավելացնել նկարագրված այս երկու տոնացույցները, որոնք ընդհանրապես հայերեն առաջին տպագիր տոնացույցներն են[7]։

5 Տե՛ս Գ. Զարբհանալյան, Պատմություն հայկական տպագրության, էջ 112, Թեոդիկ, Տիպ ու տառ, էջ 166, Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, էջ 106, 107։

6 Իրականում այդ շարակնոցի տպագրությունը Ոսկանը սկսել է, իսկ 1682 թ. հետո այն ավարտել է Պետրոս Ջուղայեցին։

7 Գ. Զարբհանալյանը («Հայկական մատենագիտ.», էջ 680—681) հայերեն Տոնացույցի 1-ին տպագրությունը համարում է 1701-ինը (Կ. Պոլիս), իրականում դա՝ 1669 այս երկու և 1671-ի (Վենետիկյան) տոնացույցներից հետո 4-րդն է։